ՏՐԻՈ ՄԱՐԶԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Տրիո Մարզայինը ծառայությունների փաթեթ է, որի կազմում ներառված է երեք ծառայություն՝ Լայնաշերտ Ինտերնետ, Սմարթ հեռուստատեսություն և Ֆիքսված հեռախոսակապ:

Տրիո Մարզային ծառայությունների փաթեթին հնարավոր է բաժանորդագրվել բացառապես 1 տարվա ժամկետային պայմանագրով, և բաժանորդը պարտավորվում է ծառայության ակտիվացման օրվանից 1 տարի (365 օր) շարունակ օգտվել ծառայություններից: Տվյալ դեպքում.

- Wi-Fi սարքի (ակտիվացված Wi-Fi ծառայությամբ) օգտագործման իրավունքը ներառվում է **Տրիո Մարզային** ծառայությունների փաթեթում և տրամադրվում է առանց վճարի գանձման:
- **Տրիո Մարզային** ծառայությունների փաթեթի բաժանորդները ստանում են իրենց ծառայությունների փաթեթի պայմաններով սահմանված արագության համեմատ կրկնակի բարձր արագություն՝ մեկ տարի շարունակ (Եթե բաժանորդը օգտվում է Հավելյալ արագություն ծառայությունից, ապա կրկնապատկվում է **Տրիո Մարզային** ծառայությունների փաթեթի հիմնական պայմաններով սահմանված Ինտերնետի արագությունը, իսկ արդեն իսկ ակտիվացված Հավելյալ արագություն ծառայության շրջանակներում տրամադրվող արագությունը զումարվում է **Տրիո Մարզային** առաջարկի շրջանակներում կրկնապատկված արագությանը):

Wi-Fi սարքի օգտագործման իրավունքը բաժանորդի համար պահպանվում է նաև **Տրիո Մարզային** ծառայությունների փաթեթին 1 տարով բաժանորդագրության պայմաններով սահմանված պարտադիր ժամկետի ավարտից հետո, եթե օպերատորի և բաժանորդի միջև կնքված պայմանագիրը մնում է ուժի մեջ, և Wi-Fi սարքն անհրաժեշտ է բաժանորդին ծառայություններ մատուցելու համար: Օպերատորի և բաժանորդի միջև պայմանագրի դադարեցման դեպքում (միակողմանի կամ երկկողմանի) Wi-Fi սարքը ենթակա է վերադարձման օպերատորին:

Տրիո Մարզային ծառայությունների փաթեթին բաժանորդագրության դեպքում պայմաններով սահմանված կարգով ծառայությունների մատուցման ժամանակավոր կասեցման կամ վճարումների ուշացման պատճառով ծառայությունների մատուցման կասեցման դեպքում ծառայություններից օգտվելու պարտադիր ժամկետը երկարում է կասեցված

ժամանակահատվածի տևողությամբ, սակայն չի երկարում սույն պայմաններով տրամադրված Ինտերնետի կրկնապատիկ արագության տրամադրման ժամկետը:

Տրիո Մարզային ծառայությունների փաթեթին բաժանորդագրության պարտադիր ժամկետը համարվում է ավարտված այն դեպքում, եթե բաժանորդն օգտվել է մատուցված ծառայություններից դրանց ակտիվացման օրվանից սկսած առնվազն 365 օրվա ընթացքում:

Եթե **Տրիո Մարզային** ծառայությունների փաթեթի բաժանորդը դադարեցնում է բաժանորդագրությունը մինչև սահմանված պարտադիր ժամկետի ավարտը, ապա բաժանորդը պարտավորվում է օպերատորին ամբողջությամբ վճարել ընթացիկ պարտքը և տուգանք 15 000 ՀՀ դրամի չափով՝ դադարեցման օրվանից հաշված 10 օրվա ընթացքում:

1. Սակագնային փաթեթի փոփոխություն

Սույն կետի իմաստով՝

- ծառայությունների փաթեթ է համարվում միաժամանակ մի քանի ծառայություն պարունակող փաթեթը,
- առանձին ծառայություն է համարվում միայն մեկ ծառայությունից բաղկացած փաթեթը:

1.1. Անցում անժամկետ առանձին ծառայությունից/ծառայությունների փաթեթից (բացառությամբ Տրիո ծառայությունների փաթեթի Միրողական, Ընտանեկան, Միասնական, Անվանական սակագնային փաթեթների) Տրիո Մարզային ծառայությունների փաթեթին

Հնարավոր է առանց քանակական և ժամկետային սահմանափակումների իրականացնել որևէ անժամկետ առանձին ծառայության/ծառայությունների փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով **Տրիո Մարզային** ծառայությունների փաթեթին: Տվյալ դեպքում **Տրիո Մարզային** ծառայությունների փաթեթի ակտիվացման պահից սկսած՝ բաժանորդի համար կիրառվում են **Տրիո Մարզային** ծառայությունների փաթեթի պայմանները, ինչպես նաև բաժանորդը ստանում է հնարավորություն՝ օգտվելու Wi-Fi ծառայությունից առանց վճարի գանձման: Եթե բաժանորդը սույն կետով սահմանված կարգով անցում է կատարում **Տրիո Մարզային** ծառայությունների փաթեթին և գործող առանձին ծառայության/ծառայությունների փաթեթի շրջանակում արդեն օգտվում է Wi-Fi ծառայությունից, ապա **Տրիո Մարզային** ծառայությունների փաթեթի շրջանակում շարունակում է օգտվել Wi-Fi ծառայությունից առանց վճարի գանձման:

1.2. Անցում ժամկետային պայմանագրով առանձին ծառայությունից/ծառայությունների փաթեթից (բացառությամբ Տրիո ծառայությունների փաթեթի Սիրողական, Ընտանեկան, Միասնական, Անվանական սակագնային փաթեթների) Տրիո Մարզային ծառայությունների փաթեթին

Հնարավոր է իրականացնել ժամկետային պայմանագրով որևէ առանձին ծառայության/ծառայությունների փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով **Տրիո Մարզային** ծառայությունների փաթեթին:
Մինչև պարտադիր բաժանորդագրության ժամկետի ավարտն առանձին ծառայությունից/ծառայությունների փաթեթից **Տրիո Մարզային** ծառայությունների փաթեթին անցում կատարելու դեպքում բաժանորդը չի պարտավորվում նոր՝ **Տրիո Մարզային** ծառայությունների փաթեթի ակտիվացման պահից սկսած 1 տարի շարունակ օգտվել ծառայություններից, այլ **Տրիո Մարզային** ծառայությունների փաթեթի համար պահպանվում է գործող ծառայության/ծառայությունների փաթեթի ժամկետային պայմանագրի պայմաններով սահմանված պարտադիր բաժանորդագրության ժամկետը:

Եթե բաժանորդը մինչև պարտադիր բաժանորդագրության ժամկետի ավարտն անցում է կատարում **Տրիո Մարզային** ծառայությունների փաթեթին և գործող առանձին ծառայության/ծառայությունների փաթեթի շրջանակում՝

ա) արդեն օգտվում է Wi-Fi ծառայությունից, ապա **Տրիո Մարզային** ծառայությունների փաթեթի շրջանակում շարունակում է օգտվել Wi-Fi ծառայությունից՝ առանց վճարի գանձման,

բ) չի օգտվում Wi-Fi ծառայությունից, ապա **Տրիո Մարզային** ծառայությունների փաթեթի շրջանակում չի ստանում Wi-Fi ծառայություն՝ առանց վճարի գանձման:

Եթե ժամկետային առանձին ծառայությամբ/ծառայությունների փաթեթով սահմանված պարտադիր բաժանորդագրության ժամկետն ավարտվել է, ապա բաժանորդը կարող է անցում կատարել **Տրիո Մարզային** ծառայությունների փաթեթին՝ միանալով նոր ծառայությունների փաթեթի պայմաններին՝ պարտավորվելով օգտվել ծառայություններից 1 տարի շարունակ:

Եթե բաժանորդը պարտադիր բաժանորդագրության ժամկետի ավարտից հետո անցում է կատարում **Տրիո Մարզային** ծառայությունների փաթեթին և գործող առանձին ծառայության/ծառայությունների փաթեթի շրջանակում՝

ա) արդեն օգտվում է Wi-Fi ծառայությունից, ապա **Տրիո Մարզային** ծառայությունների փաթեթի շրջանակում շարունակում է օգտվել Wi-Fi ծառայությունից՝ առանց վճարի գանձման,

բ) չի օգտվում Wi-Fi ծառայությունից, ապա **Տրիո Մարզային** ծառայությունների փաթեթի շրջանակում հնարավորություն է ստանում օգտվել Wi-Fi ծառայությունից՝ առանց վճարի գանձման:

1.3. Անցում Տրիո Մարզային ծառայությունների փաթեթից մեկ այլ ծառայությունների փաթեթի (բացառությամբ Տրիո ծառայությունների փաթեթի Միրողական, Ընտանեկան, Միասնական, Անվանական սակագնային փաթեթների)՝ ժամկետային պայմանագիրը չդադարեցնելու պայմանով

Հնարավոր է իրականացնել **Տրիո Մարզային** ծառայությունների փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով ժամկետային պայմանագրով որևէ այլ ծառայությունների փաթեթի:

Մինչև **Տրիո Մարզային** ծառայությունների փաթեթի պարտադիր բաժանորդագրության ժամկետի ավարտը նոր ծառայությունների փաթեթին անցում կատարելու դեպքում բաժանորդը չի պարտավորվում նոր ծառայությունների փաթեթի ակտիվացման պահից սկսած 1 տարի (365 օրացուցային օր) շարունակ օգտվել ծառայություններից, այլ նոր ծառայությունների փաթեթի համար պահպանվում է **Տրիո Մարզային** ծառայությունների փաթեթի պայմաններով սահմանված պարտադիր բաժանորդագրության ժամկետը:

Եթե **Տրիո Մարզային** ծառայությունների փաթեթով սահմանված պարտադիր բաժանորդագրության ժամկետն ավարտվել է, ապա բաժանորդը կարող է առանց սահմանափակումների իրականացնել ծառայությունների փաթեթի փոփոխություն՝ անցնելով նոր ծառայությունների փաթեթի:

Եթե բաժանորդը սույն կետով սահմանված կարգով անցում է կատարում **Տրիո Մարզային** ծառայությունների փաթեթից այլ ծառայությունների փաթեթի և գործող **Տրիո Մարզային** ծառայությունների փաթեթի շրջանակում՝

ա) արդեն օգտվում է Wi-Fi ծառայությունից, ապա նոր ծառայությունների փաթեթի շրջանակում շարունակում է օգտվել Wi-Fi ծառայությունից՝ առանց վճարի գանձման:

բ) չի օգտվում Wi-Fi ծառայությունից, ապա նոր ծառայությունների փաթեթի շրջանակում չի ստանում Wi-Fi ծառայություն՝ առանց վճարի գանձման:

1.4. Անցում Տրիո Մարզային ծառայությունների փաթեթից մեկ այլ առանձին ծառայության՝ ժամկետային պայմանագիրը չդադարեցնելու պայմանով

Հնարավոր է իրականացնել **Տրիո Մարզային** ծառայությունների փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով առանձին ծառայության՝ առանց գործող ժամկետային պայմանագրի դադարեցման պայմանի:

Մինչև **Տրիո Մարզային** ծառայությունների փաթեթի պարտադիր բաժանորդագրության ժամկետի ավարտը յուրաքանչյուր անգամ կատարելով ծառայությունների փաթեթի

փոփոխություն, անցում կատարելով առանձին ծառայության՝ բաժանորդը պարտավորվում է վճարել անցման վճար՝ 4,000 ՀՀ դրամի չափով, մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:

Մինչև **Տրիո Մարզային** ծառայությունների փաթեթի պարտադիր բաժանորդագրության ժամկետի ավարտը դեպի առանձին ծառայության անցում կատարելու դեպքում ժամկետային պայմանագիրը վերակնքվում է, և բաժանորդը պարտավորվում է առանձին ծառայության ակտիվացման պահից սկսած 1 տարի (365 օրացուցային օր) շարունակ օգտվել ծառայություններից:

Եթե **Տրիո Մարզային ծ**առայությունների փաթեթով սահմանված պարտադիր բաժանորդագրության ժամկետն ավարտվել է, ապա բաժանորդը կարող է առանց սահմանափակումների անցում կատարել առանձին ծառայության:

Եթե բաժանորդը սույն կետով սահմանված կարգով անցում է կատարում առանձին ծառայության և գործող **Տրիո Մարզային** ծառայությունների փաթեթի շրջանակում՝

ա) արդեն օգտվում է Wi-Fi ծառայությունից, ապա նոր առանձին ծառայության շրջանակում շարունակում է օգտվել Wi-Fi ծառայությունից՝ առանց վճարի գանձման:

բ) չի օգտվում Wi-Fi ծառայությունից, ապա նոր առանձին ծառայության շրջանակում չի ստանում Wi-Fi ծառայություն՝ առանց վճարի գանձման:

1.5. Անցում Տրիո Մարզային ծառայությունների փաթեթից մեկ այլ առանձին ծառայության/ծառայությունների փաթեթի՝ ժամկետային պայմանագրի դադարեցման պայմանով

Հնարավոր է իրականացնել **Տրիո Մարզային** ծառայությունների փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով առանձին ծառայության/ծառայությունների փաթեթի՝ գործող ժամկետային պայմանագրի դադարեցման պայմանով:

Եթե սույն կետով սահմանված կարգով անցումը կատարվում է մինչև ժամկետային պայմանագրով սահմանված պարտադիր բաժանորդագրության ժամկետի ավարտը, ապա բաժանորդը պարտավորվում է վճարել **Տրիո Մարզային** ծառայությունների փաթեթի շրջանակում կնքված ժամկետային պայմանագրի վաղաժամ դադարեցման դեպքում սահմանված տուգանքը մինչև Հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 15-ը ներառյալ, և շարունակում է օգտվել առանձին ծառայությունից/ծառայությունների փաթեթից՝ առանց պարտադիր ժամկետային բաժանորդագրության պայմանի:

Եթե **Տրիո Մարզային** ծառայությունների փաթեթով սահմանված պարտադիր բաժանորդագրության ժամկետն ավարտվել է, ապա բաժանորդը կարող է առանց սահմանափակումների անցնել առանձին ծառայության/ծառայությունների փաթեթի:

Եթե բաժանորդը սույն կետով սահմանված կարգով անցում է կատարում առանձին ծառայության/ծառայությունների փաթեթի և գործող **Տրիո Մարզային** ծառայությունների փաթեթի շրջանակում՝

ա) արդեն օգտվում է Wi-Fi ծառայությունից, ապա առանձին ծառայության/ծառայությունների փաթեթի շրջանակում շարունակում է օգտվել Wi-Fi ծառայությունից՝ առանց վճարի գանձման:

բ) չի օգտվում Wi-Fi ծառայությունից, ապա առանձին ծառայության/ծառայությունների փաթեթի շրջանակում չի ստանում Wi-Fi ծառայություն՝ առանց վճարի գանձման:

Հնարավոր չէ իրականացնել ծառայությունների փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով **Տրիո Մարզային** ծառայությունների փաթեթից **Տրիո** ծառայությունների փաթեթի այլ սակագնային փաթեթներին:

Հնարավոր չէ իրականացնել ծառայությունների փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով **Տրիո** ծառայությունների փաթեթի այլ սակագնային փաթեթներից **Տրիո Մարզային** ծառայությունների փաթեթին:

Հնարավոր չէ իրականացնել սակագնային փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով «Տրիո Մարզային» սակագնային փաթեթից «Ռինտերնետ 6000» սակագնին:

Բոլոր նրանց համար, ովքեր միանում են «Ռինտերնետ 6000» սակագնին սկսած 01.06.2016թ., հնարավոր չէ իրականացնել սակագնային փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով «Ռինտերնետ 6000» սակագնից «Տրիո Մարզային» սակագնային փաթեթին:

2. Այլ պայմաններ

Տրիո Մարզային ծառայությունների փաթեթի բաժանորդները կարող են օգտվել Անվանափոխության, Հասցեի փոփոխության, Ժամանակավոր կասեցման, Հաշվի վերծանման, Հեռախոսահամարի փոփոխության, Գեղեցիկ հեռախոսահամարի ընտրության, Սարքի փոխարինման/Wi-Fi ակտիվացման, Ստատիկ IP հասցե ծառայություններից:

Օպերատորի և բաժանորդի միջև բոլոր այն հարաբերությունները, որոնք կարգավորված չեն սույն պայմաններով, կարգավորվում են օպերատորի կողմից հրապարակված և բաժանորդի կողմից ժամկետային պայմանագիրը կնքելու պահին գործող խմբագրությամբ էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններով, ինչպես նաև օպերատորի կողմից հրապարակված ցանկացած այլ պայմաններով, որոնք չեն հակասում սույն պայմաններին:

Սույն պայմաններում բոլոր հասկացությունները կիրառվում են օպերատորի կողմից էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններով սահմանված իմաստով: